Դու, Տէր Աստուած իմ, ի՞նչ կարծիքի ես. եթէ այս տարի տօնական ծառ ու սեղան պատրաստեմ սրտիս ներս, եւ նուէրների ու խորտիկների փոխարէն՝ դրանք զարդարեմ իմ բոլոր ընկերներիս անուններով: Հեռաւոր ու մերձաւոր ընկերներիս, հների ու նորերի, նրանց՝ որոնց հանդիպում եմ ամէն օր, եւ նրանց՝ որոնց հազուադէպ եմ տեսնում: Նրանց՝ որոնց ամէն պահ յիշում եմ, եւ նրանց՝ որոնք երբեմն մոռացուած են մնում: Մնայուն ընկերներիս, եւ նրանց՝ ովքեր գնում են ու գալիս: Նրանց՝ ովքեր ընկեր են միայն ուրախութեան մէջ, եւ նրանց՝ ովքեր ընկեր են նաեւ դժուար պահերին: Նրանց՝ ովքեր, առանց ուզելու, վշտացրել են ինձ: Նրանց՝ որոնց խորապէս ճանաչում եմ, եւ նրանց՝ որոնց միայն երեւութապէս գիտեմ: Նրանց՝ որոնք ինձ քիչ են պարտական, եւ նրանց՝ որոնց ես շատ եմ պարտական: Պարզ ընկերներիս եւ կարեւոր ընկերներիս: Անունները բոլոր նրանց՝ ովքեր արդէն անցել են իմ կեանքի միջով: Այսպէս զարդարուած, կեանքս թող խոր արմատներով միշտ տօնական ծառ լինի, որպէսզի նրանց անունները երբեք դուրս չգան իմ սրտից: Թաւ ճիւղերով մի ծառ, որպէսզի նորեկ անունները միանան արդէն գոյութիւն ունեցողներին: Հաճելի շուք անող մի ծառ, որպէսզի մեր ընկերութիւնը զովացնող պահ լինի կեանքի մութ գիշերներում:



**ՈՒՐԱԽ ԱՄԱՆՈՐ ՁԵԶ, ԵՐՋԱՆԻԿ ՆՈՐ ՏԱՐԻ**
**ԲԵՐԿՐԱՆՔՈՎ ԼԻ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ**

Մաշտոց Վահէ Ղազարեան
www.mashtoz.org